# «Aliso Canyon»-ի գազի արտահոսքից հետո տուն վերադառնալը



Այս թերթիկը պատասխանում է «Aliso Canyon» պահեստավորման հաստատությունից բնական գազի արտահոսքի մասին հարցերին: Շատ բնակիչներ ժամանակավորապես տեղափոխվել են Փորթեր Ռենչ տարածքից՝ գազի արտահոսքից առաջացող ծծմբային հոտերի և իրենց ունեցած ախտանիշների պատճառով: Հասկանալի է, որ բնակիչները մտահոգված են, թե երբ կարող են ապահով վերադառնալ իրենց տները:

## 1. Ապահով է արդյո՞ք տուն վերադառնալ:

Բնակիչները կարող են ապահով վերադառնալ իրենց տները, երբ նահանգը հաստատի, որ արտահոսող նավթահորը փակվել է, **ԵՎ** հոտերն այլևս ախտանիշներ չեն առաջացնում: Երբ նավթահորը փակվի, Հանրային առողջության բաժանմունքն (Հանրային առողջություն) ակնկալում է տեսնել հոտ և/կամ հնարավոր առողջական ազդեցություններ առաջացնող քիմիական արտահոսքի հետագա նվազեցում: Հանրային առողջությունը կշարունակի գնահատել օդի որակն ու առողջությունը Փորթեր Ռենչ տարածքում: Եթե որևէ պահի Հանրային առողջությունը նկատի օդի վերահսկումից ստացված անսովոր տվյալներ կամ առողջական ազդեցություններ բնակիչների վրա, մենք կտեղեկացնենք նրանց, ում վրա դա կարող է ազդել, և կձեռնարկենք անհրաժեշտ քայլերն առողջությունը պաշտպանելու համար:

## 2. Ի՞նչ է անում Հանրային առողջությունը Փորթեր Ռենչի հողի և ջրի անվտանգությունն ապահովելու համար:

Հանրային առողջությունը և այլ գործակալությունները կշարունակեն աշխատել Փորթեր Ռենչ համայնքի վիճակը վերականգնելու համար:

### Հող և դրսի մակերեսներ

Քանի որ մեթանը և մտահոգություն առաջացնող այլ քիմիական նյութերը գազեր են, նրանք նստվածք չեն առաջացնում ու չեն աղտոտում հողը: Այնուամենայնիվ, բնակիչները կարող է մտահոգություններ ունենան «յուղայի նստվածքի» մասին, որն առաջանում է արտահոսող նավթահորին կից անցկացվող հորատման գործունեության հետևանքով: Բնակիչները պետք է խուսափեն մրգերից, բանջարեղենից և որևէ մակերեսներից, որոնք պատված են յուղայի նստվածքով: Եթե որևէ յուղայի նստվածք եք նկատում սննդի կամ այլ մակերեսների վրա, զանգահարեք SoCalGas, որպեսզի նրանք անձնակազմ ուղարկեն այն գնահատելու ու մաքրելու համար, եթե անհրաժեշտ է:

### Ջուր

Խմելու ջուրը բերվում է Փորթեր Ռենչ այլ տարածքներից, որպեսզի այն չունենա գազի արտահոսքի ազդեցությունը: Խմելու ջրի մասին մտահոգությունները պետք է քննարկվեն Լոս Անջելեսի ջրի և էլեկտրաէներգիայի բաժանմունքի (DWP) հետ: Լողավազանները բավականին մեծ են ու չեն ազդվի գազի արտահոսքից:
Ջուկ պարունակող ջրավազանները, հնարավոր է, պետք է ստուգվեն թթվայնության համար:

## 3. Իսկ եթե՞ ես դեռ գազի հոտ եմ զգում իմ տանը:

Ակնկալվում է, որ հոտերը ձեր տանը կդադարեն գազի արտահոսքը կանգնեցնելուց հետո: Սակայն եթե զգում եք «փտած ձվի», «ծխտորի», «սկունսի» կամ այլ հոտեր, կարող եք օդափոխել ձեր տունը՝ բացելով դռներն ու պատուհանները կամ օգտագործելով հովհարիչներ, որպեսզի հոտը դուրս գնա:
Եթե հոտը շարունակվում է, անմիջապես դիմեք SoCalGas ու AQMD, որպեսզի նրանք կարողանան հետազոտել հոտի աղբյուրը:

### Հիմնական կետեր

- Կարճատև ախտանիշները պակասելու են արտահոսման նվազեցման հետ միասին:
- Հանրային առողջությունը շարունակելու է գնահատել դրսի օդի որակը նույնիսկ գազի արտահոսքի դադարեցումից հետո:
- SoCalGas-ին զեկուցեք յուղայի նստվածքի կամ շարունակվող գազի հոտերի մասին:

### Լրացուցիչ տեղեկությունների համար

**Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության բաժանմունք**
888-700-9995
http://publichealth.lacounty.gov/

**Հարավային ափի օդի որակի տնօրինման բաժին (AQMD)**
http://www.aqmd.gov/
1-800-CUT-SMOG (1-800-288-7664)

**Լոս Անջելես վարչաշրջանի հրշեջ բաժանմունք**
323-881-2411
http://www.fire.lacounty.gov/

**Լոս Անջելեսի ջրի և էլեկտրաէներգիայի բաժանմունք (DWP)**
1-800-DIAL-DWP (1-800-342-5397)
https://www.ladwp.com/

**Հարավային Կալիֆորնիայի գազի կազմակերպություն (SoCalGas)**
818-435-7707
https://www.socalgas.com/

Թարմացվել է 02/05/16